

ՀԱՐԿԱԻՈՐ ԳԻՏԵԼԻՔ.

Ա. Բաղձարով որ ամսագրոյս բաժանորդներն ըստ կարի անյապաղ եւ անվրէպ կարգաւ առնուն հետզհետէ ելած տետրակները, հրաման ընդունեցաք ընդհանուր նամակատանց վերատեսչութեանն որ ուրիշ օրագրաց եւ յրագրաց պէս լինի այսուհետեւ նաեւ մեր ամսագրոյս Ռուսաստանի մէջ ու եւրոպայի ուրիշ կողմերը յուղարկուիլը, այսինքն այնպէս որ ամէն բաժանորդ ուղղակի իւր անուանը վրայ ընդունի ամսագիրը նամակատուներէն (*փոփոխէն*): — Ուստի կկնդրեմք Ռուսիոյ եւ ուրիշ եւրոպական երկիրներու բաժանորդներէն որ իրենց անունները ձիւղ կերպով գրուած յուղարկեն մեզի կամ մեր Գործակալաց Ֆուկուսիւն առաջ, որպէս զի տպագրուին ու իրենց տետրակներուն պատրուակին վրայ կպցուին: — Նամակատան կանոններուն համեմատ՝ իւրաքանչիւր բաժանորդի համար մէկ

րուպի ու կէս նամակատան պիտի վճարէ մեր գրասենեակը. ուստի այժմէն կձանուցանեմք այս մեր ամսագիրը իրենց բաժանորդութեամբը պատուող ընթերցասիրաց, որ թէպէտ Տաճկաստանի բաժանորդաց համար ասոր տարեկան գինը 6 րուպի կմնայ, բայց Ռուսաստանի եւ ուրիշ դրսի երկիրներու բաժանորդները առաջիկայ 1861 տարւոյն համար պիտի վճարեն 7 րուպի եւ 50 փոփէկ՝ հայերէն մասին, եւ 5 րուպի ու 50 փոփէկ ռուսերէն մասին համար:

Բ. Գրասենեակին եւ Ամսագրոյս վերաբերեալ հայերէն նամակները պիտի յուղարկուին՝ այս մակագրով հայերէն „Ի Գրանոց Խալիպեան Տպարանին, ի Թէոդոսիա“. եւ ռուսերէն, «Въ Контору Типографіи Армянскаго Халибовскаго Училища, въ Θεοδοσίαν».

ՀԱՄԱՌՑՑ ՏԱՐԵԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՅԻՅ 1860 ՏԱՐԻՈՅՍ.

Խալիպեան ազգային ուսումնարանին տարեկան քննութիւններն սկսան յունիսի 10-ին, եւ վերջացան 25-ին: Վերաւսուցչք եւ վարժապետք եւ պատուաւոր հանդիսականք առհասարակ իրենց գոհութիւնը յայտնեցին՝ աշակերտաց ըրած յառաջադիմութեանը վրայ: Եւ որովհետեւ քննութեանն աչ հասկըցունցաւ քե աշակերտք բոլոր տարեկան ընթացքին մէջ կրցածներուն չափ աշխատել են՝ որպէս զի անպատճառ փոխեն իւրաքանչիւրն իրենց դասարանն ու բարձրագոյն դասարանը անցնին, քննիչները իրաւացի դատեցան հրաման տալ մէկքանիսին որ պատրաստուին նորէն քննուելու օգոստոսի առաջին օրերն ու այնպէս բարձրագոյն դասարան անցնելու. եւ այնպէս՝ տարեկան հանգրստեան ժամանակէն ետքը այն նորէն քննուելու աշակերտները քաջութեամբ պատասխան տալով՝ գրեթէ ամենն ալ փոխադրուեցան բարձրագոյն դասարանները: — Աշակերտաց անունները՝ ըստ իւրաքանչիւր դասարանաց՝ պիտի տպագրուին յաջորդ ամսաբերբերէն մեկուն կողքին վրայ:

— Թէոդոսիոյ Հայկազն Օրիորդաց դպրոցին առաջին վեցամսեայ հարցաքննութեան հանդէսն եղաւ յունիսի 28-ին, եւ այս կարճ ժամանակիս մէջ եղած գեղեցիկ յառաջադիմութեանն աչ յայտնապէս կգուշակուին այն ապագայ բարեկրթութեան պատուները՝ որոց իրաւամբ կսպասէ ազգերն իս մատաղեւրամ օրիորդաց երկիւղած եւ քաղաքավար, համեստ եւ ջանասեր ազգային կրթութեանն:

— Հին Խրիմ քաղաքի Ժողովրդական դպրոցին տարեկան հարցաքննութիւնն եղաւ յունիսի 30-ին: Առաջնորդը ըստ

սովորութեան զնաց նախ սուրբ եկեղեցին, ուսկից քաղաքական գլուխը՝ Յովհաննէս Աղա Մատրեոսեան, ազգային Դատարանին Խորհրդականները եւ պատուաւոր ժողովրդականք տարին զինքը նորաշէն դատարանին դահլիճը, եւ հոն եղաւ հարցաքննութեան հանդէսը: Հին Խրիմու պատանեկաց ծանօթ սրամտութիւնը, եւ անոր հետ նոցա ջանասիրութիւնը երևցաւ նաեւ այն հանդիսին մէջ, եւ Առաջնորդը վարձատրեց այս երեք ուշիմ պատանիները իրաւաբերութիւնն նոցա եւ յօրինակ բարի այլոց:

Սարբեան Մովսէս.

Պազալեան Դասպար.

Դարբաստամեան Յովհաննէս:

Բոլոր աշակերտաց բիւն է երեսունեակեց:

— Թէոդոսիոյ Ժողովրդական դպրոցին տարեկան հարցաքննութեան հանդէսն եղաւ յունիսի 2-ին առաջի մեծարոյ Հոգաբարձուաց եւ քանի մը պատուաւոր հրաւիրականաց՝ նախագահութեամբ Դ. Խորէն Վարդապետի, եւ մասնաւոր գովութեան արժանի երևցաւ Աղասեան վարժապետին մշտադիւր ջանքը եւ աշակերտաց ուսումնասիրութիւնն ընդհանրապէս: Երեսունեակեց աշակերտաց մէջէն վարձատրութիւն ընդունողներն ասոնք եղան.

Ազարիա Մակարեան.

Կիրակոս Մարտիրոսեան.

Մարտիրոս Կիրեղեան.

Սարգիս Յարութիւնեան:

Հրամայեցաք տպագրել. Ի Թէոդոսիա, ի 16 Օգոստոսի 1860. Գարրիէլ Վ. Այվազեան:

Իտալարանի Խալիպեան Ռուսումնարանի Հայոց: